ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ 1995 Թ.

Ռոզա Աբաջյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի հայցորդ

ՀՀ անկախության հռչակման պահից մինչև Սահմանադրության ընդունումը, քարոզելով ժողովրդավարություն և քննադատելով խորհրդային ժողովրդավարությունն ու ապամոնտաժելով դրա ինստիտուտները, իշխանությունները դրսևորեցին զսպվածություն ժողովրդաիշխանության անմիջական ձևերի շրջանակի ընդլայնման հարցում: Պահպանողականության հիմնական պատճառը քաղաքական կայունության կարևորումն էր, որը Հայաստանին առավել անհրաժեշտ էր ԼՂՀ-ում չհայտարարված պատերազմի պայմաններում: 1994 թ. գարնանը կնքված զինադադարի համաձայնությունից հետո արդեն ժողովրդավարական արդիականացման պահպանողական քաղաքականությունից հնարավոր էր անցնել ազատական արդիականացմանը, ապահովել ժողովրդի իրական մասնակցությունը քաղաքական գործընթացներին: Պահը շատ հարմար էր հատկապես սահմանադրական ակնկալվող բարեփոխումների պայմաններում, որը մեկնարկել էր 1991 թ.՝ ՀՀ Գերագույն խորհրդի Սահմանադրական հանձնաժողովի ստեղծմամբ, սակայն նախագծի նախապատրաստման աշխատանքները առաջ գնացին 1993 թ. սկսած[1]:

Այսպիսով, առաջանում է հետազոտական խնդիր՝ պարզել, թե ժողովրդաիշխանության ի՞նչ հայեցակարգ ամրագրեց 1995 թ. Սահմանադրությունը, ինչպիսի՞ն էր ժողովրդաիշխանության անմիջական և ներկայացուցչական ձևերի սահմանադրական հարաբերակցությունը, անմիջական ժողովրդաիշխանության ո՞ր ձևերն ստացան սահմանադրական ամրագրում, և ինչպիսի՞ն էր դրանց տեսական դրսևորումը, ի՞նչ միտումներ են նկատվում 1995 թ. Սահմանադրության ընդունումից հետո ընթացիկ օրենսդրության մեջ ժողովրդաիշխանության անմիջական ձևերի շրջանակի և բովանդակության առումով:

1995 թ. Սահմանադրությունն ամրագրեց ժողովրդաիշխանության ազատական հայեցակարգի վրա կառուցված ժողովրդաիշխանության համակարգ.

ա) Հայաստանի Հանրապետությունում իշխանության պատկանելությունը ժողովրդին (հոդված 2, 1-ին մաս),

բ) ժողովրդի միասնական իշխանության իրականացման անմիջական և ներկայացուցչական ձևերի ճանաչումը (հոդված 2, 2-րդմաս),

գ) ժողովրդի իշխանության յուրացման որակումը որպես հանցագործություն (հոդված 1, 3-րդ մաս),

դ) անմիջական ժողովրդաիշխանության երկու կարևոր ձևերի՝ հանրաքվեի և ընտրությունների սկզբունքների ամրագրումը (հոդված 3),

ե) հանրաքվեի՝ որպես ժողովրդաիշխանության բարձրագույն ձևի, երկու տեսակների՝ սահմանադրական-պարտադիր և օրենսդրական-լրացուցիչ հիմնադրույթների ամրագրումը (հոդված 111,112,113),

զ) հիմնադրվեց տեղական ինքնակառավարումը, ինչը ժողովրդավարության արդի տեսությունը դիտարկում է ժողովրդաիշխանության անմիջական ձև (հոդված 105-106, 108-109):

Սահմանադրական դրույթների մեկնաբանությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ 1995 թ. Սահմանադրությունը ելնում է իշխանության միասնականության

[1] 1995 թ. մայիսին խորհրդարանում քննարկվեց և հաստատվեց սահմանադրական հանձնաժողովի մշակած ՀՀ Սահմանադրության նախագիծը: 1995 թ. հուլիսի 5-ին անցկացվեց հանրաքվե, և այն ընդունվեց:

սկզբունքից՝ այն վերագրելով միայն ժողովրդին: Իշխանության միասնականության ազատական այս վարկածը ռուսսոյական գաղափարների սահմանադրական կենսագործումն էր, որն իշխանության միակ աղբյուր և տեր էր ճանաչում, հռչակում ժողովրդին: Այսինքն՝ իրականության մեջ իշխանական երկակիությունն անմիջական և պետական, հայեցակարգային առումով միասնական իշխանության երկու առանձին դրսևորումներն են, հետևաբար՝ պետական իշխանությունն ինքնաբավ ու ինքնակալ չէ, այլ ժողովրդի ինքնիշխանությունից ածանցված, նրա իշխանության իրականացման ձևերից մեկը: Սահմանադրական իմաստով ժողովրդի միասնական իշխանության իրականացման գործընթացը վերածվում է երկու կառուցակարգերի՝ առաջինը ժողովրդի կողմից իրեն պատկանող իշխանության իրականացումն է ազատ ընտրությունների, հանրաքվեների ու տեղական ինքնակառավարման միջոցով, երկրորդը՝ Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Այստեղ մենք նկատում ենք շատ կարևոր մոտեցում՝ իշխանության բաժանում ժողովրդի և պետության միջև, հետո նոր պետական իշխանության տարանջատում՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների:

Սահմանադրական ձևակերպումները, ի դեմս 2-րդ հոդվածի 1-ին մասի, կարծես թե անթերի են, քանզի դրանք մերժում են խորհրդային պետականահենք ժողովրդավարությունը, պետական հանրային իշխանական ողջ կառույցը դիտարկում ժողովրդի իշխանության իրականացման ձև, որն ամփոփ կոչվում է ներկայացուցչական ժողովրդաիշխանություն: Այսինքն՝ հանրային իշխանական ապարատը չունի ի վերուստ տրված, ինքնուրույն իշխանություն. այն ընդամենը ժողովրդի ներկայացուցիչն է, ժողովրդի անունից ժողովրդի համար, ժողովրդի միջոցով ժողովրդին պատկանող իշխանություն իրականացնողը: Կարծում ենք, որ միակ բացթողումը 1990 թ. Անկախության հռչակագրի «ժողովուրդը որպես պետականության կրող» ձևակերպումից հրաժարվելն էր:

Այժմ փորձենք քննարկել Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին մասի տեսական իմաստավորման հարցը 1990-ական թթ. կեսերի սահմանադրական մտքի տեսանկյունից: Սահմանադրական հանձնաժողովի անդամ Վ. Նազարյանը, մեկնաբանելով Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածները, եզրակացնում է, որ Սահմանադրությունը, բնութագրելով Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական պետություն, ճանաչում է, որ դրանում «իշխանության միակ աղբյուրը ևտերը ժողովուրդն է»[1]: Այնուհետև Սահմանադրության 2-րդ հոդվածն իրավաբանական կարգավորման համակարգային կապերում Վ. Նազարյանը դիտարկում է «որպես ժողովրդավարության գլխավոր սկզբունքի ամրագրում»՝ համարելով, որ «ՀՀ Սահմանադրության մյուս բոլոր դրույթներն, ըստ էության, ծառայում են այս գերագույն սկզբունքի իրականացմանը»[2]:

1990-ականներին հրապարակված մեկ այլ աշխատության մեջ սահմանադրական կարգավորումը գնահատվում է ազատական գաղափարախոսության դիրքերից՝ համարելով, որ ՀՀ «սահմադրական կարգի հիմունքը ժողովրդավարության սկզբունքն է: Դա նշանակում է, որ պետական իշխանության աղբյուրը ժողովուրդն է»[3]: Ինչպես տեսնում ենք, այս աշխատության մեջ ժողովուրդը հպանցիկ դիտվում է պետական իշխանության աղբյուր: Սակայն աշխատության հեղինակների գլխավոր խնդիրը 1990-ական թթ. դրությամբ ազատական ժողովրդավարության գաղափարների դրական կողմերի ներկայացումն էր՝ հակադրելով այն սոցիալիստականին, դրանով ցույց տալով զարգացող երկրների հաջողությունները, որի գրավականը ժողովրդավարությունն է: Հեղինակների խնդիրն ընդամենը արևմտյան ժո-

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, իրավագիտության դոկտոր Վլադիմիր Նազարյանի ծանոթագրություններով, Երևան, 1995 թ., էջ 9:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 11:
[3] Տե՛ս ժողովրդավարություն, Եր., 1998, էջ 53:

ղովրդավարության տեսության տեղայնացումն է Հայաստանի քաղաքական-իրավական գաղափարախոսության մեջ և Սահմանադրության թռուցիկ գնահատականը ժողովրդավարության դիրքերից: Մինչդեռ ժողովրդավարության կենսագործման և Հայաստանի իրական ժողովրդավարացման խնդիրն անտեսված էր, ինչը երևի թե պայմանավորված էր քաղաքական-իրավական փորձի բացակայությամբ: Ժողովրդավարության և ժողովրդաիշխանության հիմնահարցերի խորքային իմաստավորումը տեղի էր ունենալու հետագայում՝ փորձի կուտակմանը զուգընթաց[1]:

ՀՀ 1995 թ. Սահմանադրության 2-րդ հոդվածի ձևական-իրավական մեկնաբանություն նկատում ենք նաև Հ. Խաչատրյանի աշխատությունում: Մեկնաբանման ընթացքում օգտագործվում են հանրահայտ ձևակերպումներ՝ «իշխանության տեր», «իշխանության աղբյուր», «ժողովրդի ինքնիշխանություն» և այլն[2]: Հ. Խաչատրյանի մեկնաբանմամբ՝ «ժողովրդաիշխանություն նշանակում է ժողովրդի կամքի բացահայտման և իրականացման քաղաքակիրթ մեխանիզմ, ինչպես անմիջական ժողովրդավարության… բազմապիսի ձևերի, այնպես էլ ներկայացուցչական ժողովրդավարության… համակարգի միջոցով»: Ելնելով այս շատ կարևոր մեկնակետից՝ հեղինակը, սակայն, բավարարվում է միայն ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված անմիջական ժողովրդաիշխանության երեք ձևերի՝ ընտրություններ, հանրաքվե, տեղական ինքնակառավարում, թվարկմամբ՝ անտեսելով ՀՀ Սահմանադրությամբ չամրագրված ձևերի անհրաժեշտությունը: Երևի թե 1990-ական թթ. անկախության իրավական ռոմանտիկայի ոգով տոգորված հեղինակները դեռևս չէին պատկերացնում ժողովրդաիշխանության երկու ձևերի՝ ժողովրդի և պետության համակարգային հավասարակշռության խախտման հնարավորությունը, պետական ներկայացուցչական համակարգի անվերապահ գերիշխանության հաստատման, նրա կողմից ժողովրդի իշխանության յուրացման հնարավորությունը:

1995 թ. Սահմանադրության տեսական գնահատականները դեռ շատ ընդհանուր են, մանրազնին չիմաստավորված, առանց դրա իրական արդյունքների կանխագուշակման: Համենայն դեպս և՛ սահմանադրական կարգավորման ու դրա հիմքում դրված հայեցակարգը, և՛ դրանց տեսական գնահատականներն աչքի են ընկնում մի շարք առավելություններով: Օրինակ՝ դրանք ելնում են միասնական իշխանության ու այն ժողովրդին պատկանելու հիմնարար գաղափարից՝ ներկայացուցչական-պետական իշխանությունը համարելով ժողովրդի իշխանության դրսևորում, դրա իրականացման կառուցակարգ: Մյուս առավելությունը լավատեսությունն ու հույսն է, որ կապում է քաղաքական իրավական միտքը ժողովրդավարության և ժողովրդաիշխանության սահմանադրական ինստիտուտների հետ: Երևի թե այդ հույսն էր, որ չափավորում էր տեսական գնահատականների քննադատական ուղղվածությունը, զսպում այն:

Որքանո՞վ էին հավասարակշռված և միմյանց հակակշռող ժողովրդի միասնական իշխանության իրականացման երկու ձևերը՝ անմիջականը և հանրային-պետականը սահմանադրական մակարդակում: Սահմանադրության ընդունման պահին աշխարհում ժողովրդաիշխանության փորձն արդեն ուներ տասնյակի հասնող անմիջական կառավարման ձևեր: ՀՀ Սահմանադրությունը դրանցից ամրագրել էր միայն ընտրությունները, հանրաքվեն, տեղական ինքնակառավարումը[3]:

---

[1] Այդ աշխատության մեջ քննարկվում են նաև ժողովրդավարացման գործընթացը, դրա նշանակությունը և պայմանները (տե՛ս 27-28 էջերը): Սակայն այդ վերլուծությունը շատ ընդհանուր է, Հայաստանի սահմանադրահիրավական կարգավորմանը ոչ համահունչ, այսինքն՝ առանց դրա իրական արդյունքների գնահատականի:

[2] Տե՛ս **Խաչատրյան Հ.Մ.** Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը /ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ,- Եր.: 1997, էջ 35-36:

[3] Ժողովրդավարության այդ ձևերի մասին տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք», Եր.: Երևանի համալս. հրատ., 2003, էջ 133-139, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»: Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի – Եր.: Իրավունք, 2010, էջ 56-63:

1995 թ. Սահմանադրության ընդունմամբ հանրաքվեի իրավական կարգավորման օրենսդրությունը դարձավ ամբողջական՝ ՀՀՍահմանադրություն, «Հանրաքվեի մասին» ՀՀ 1991 թ. օրենք: Հանրաքվեին վերաբերող սահմանադրական դրույթների մի մասը հանրաքվեի իրավական ինստիտուտի համար ընդհանուր նշանակություն ուներ, իսկ մյուս մասը սահմանադրական հանրաքվեի հետ կապված հասարակական հարաբերությունները կարգավորող հատուկ դրույթներ էին: 1995 թ. Սահմանադրությունն ամրագրեց հանրաքվեի նոր տեսակ՝ սահմանադրական պարտադիր-ֆակուլտատիվ հանրաքվեի ինստիտուտը: Դրանով ժողովուրդը ճանաչվեց հիմնադիր իշխանություն:

Հանրաքվեի սահմանադրական կարգավորումը շատ ընդհանուր էր, առանց դրա կարևոր հիմունքների մանրամասնեցման, ինչը քաղաքական-իրավական տեսանկյունից ռիսկային էր, որովհետև ստեղծում էր օրենսդրի կողմից հետընթացային, նաև հակաժողովրդավարական օրենսդրական նորամուծությունների սպառնալիք: Սահմանադրությունը չէր նախատեսում տեղական հանրաքվեի ինստիտուտը: «Հանրաքվեի մասին» 1991 թ. օրենքը, ճանաչելով տեղական հանրաքվեի անցկացման հնարավորությունը, կարգավորում էր միայն համապետական հանրաքվեների անցկացման ընթացակարգը: Այսպիսով, մինչև 2002 թ. տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտը ՀՀ-ում չէր գործում:

ՀՀ 1995 թ. Սահմանադրությամբ ամրագրված ընտրական համակարգի հիմունքներն ընդհանուր առմամբ իրավական, ժողովրդավարական բնույթ ունեին[1]: Քաղաքական բազմազանության պայմաններում դրանք այլընտրանքային էին: Սակայն ընտրությունները՝ որպես ժողովրդական վերահսկողության, հանրային իշխանության հաշվետվողականության ձև, ևս շատ թույլ գործիք էին հանրային-քաղաքական իշխանությանը հակակշռելու համար: Դրա պատճառը նախ դրանց պարբերականությունն էր (4-5 տարին մեկ), իսկ այնուհետև ընտրական հարաբերությունների քաղաքական իրավական նշանակության խեղաթյուրումը՝ մի շարք քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական, իրավական և այլ պատճառներով: Իրավական, ժողովրդավարական բնույթ ունեցող ընտրական համակարգն անկարող դարձավ իր առաքելությունն իրացնելու, որովհետև խեղաթյուրվեց քաղաքական-պետական ռեժիմը, ինչի հետևանքով կյանքի կոչվեցին «կեղտոտ ընտրական կառուցակարգերը», ընտրական խաղերն ու կեղծիքները, փուչիկ կուսակցությունները, սոցիալական դեմագոգիան և այլն[2]:

Գոհացուցիչ չէր տեղական ինքնակառավարման վիճակը՝ պայմանավորված մի շարք պատճառներով: Այն առաջին հերթին Սահմանադրության ընդունումից հետո նոր ձևավորվող ինստիտուտ էր: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀօրենքն ընդունվել է 1996 թ. հունիսին և դրանից հետո միայն կազմակերպվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ[3]: Չկայացած տեղական ինքնակառավարումը չէր կարող դառնալ քաղաքական հակակշիռ, ժողովրդաիշխանության գործուն ձև: Միաժամանակ դրանում ևս շատ ինստիտուտներ խեղված կամ անտեսված էին: Օրինակ՝ տեղական հանրաքվեի ընթացակարգը չուներ իրավական կարգավորում: Հետևաբար, ժողովրդաիշխանության կառուցակարգի իրական ուժը, բացի Սահմանադրությունից, կախված էր նաև դրա ընթացիկ օրենսդրական կարգավորման առկայությունից, բնութագրերից:

Այսպիսով, ՀՀ 1995 թ. Սահմանադրությունը՝ ա) սահմանում էր միասնական իշխանությունը ժողովրդին պատկանելու սկզբունքը շատ ընդհանուր, կարգախոսա-

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 56-63:

[2] Տե՛ս **Ա. Վաղարշյան,** Ընտրական իրավունքի հիմունքների պատմական զարգացումը Հայաստանում, «Վասն արդարութեան» իրավական գիտամեթոդական հանդես, ապրիլ, 4(40), 2003, 10-15 էջերը:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), Գիրք - Ա, Եր., 1999, էջ 423-443:

յին-հռչակագրային իրավական մակարդակով, բ) նույն ոգով նախատեսում էր ժողովրդաիշխանության անմիջական ձևերից միայն երեքը, այն էլ շատ ընդհանուր, սահմանափակ նորմատիվ բովանդակությամբ, ինչը ստեղծում էր ընթացիկ օրենսդրական կարգավորմամբ դրանց քաղաքական-իրավական չեզոքացման վտանգ: Արդյունքում սահմանադրական կարգավորումը ժողովրդաիշխանության միասնական կառուցակարգը տրոհելով երկու ենթահամակարգերի՝ չէր ստեղծում դրանց համակարգային հավասարակշռության երաշխիքներ, ինչը նախադրյալներ էր ստեղծում հանրային իշխանական կառավարման կառուցակարգի գերիշխանության հաստատման, նրա կողմից ժողովրդի իշխանության յուրացման համար:

КОНСТИТУЦИОННОЕ ЗАКРЕПЛЕНИЕ ЛИБЕРАЛЬНОЙ МОДЕЛИ НАРОДОВЛАСТИЯ В 1995г.

Роза Абаджян
Соискатель кафедры теории и истории государства и права ЕГУ

Конституция РА 1995 г. декларировала принцип принадлежности единой власти народу и устанавливала только три непосредственных формы народовластия, с ограниченным нормативным содержанием, что создавало угрозу их политико-правовой нейтрализации текущим законодательным регулированием. Конституционное регулирование, разделяя единый механизм народовластия на две подсистемы, не гарантировало их системное равновесие, что, в свою очередь, создовало предпосылки дла установления верховенства публично-властного управления и присвоения власти народа.

CONSTITUTIONAL CONFIRMING OF LIBERAL MODEL OF DEMOCRACY IN 1995

Roza Abajyan
PhD Student at the YSU Chair of Theory and History of State and Law

The 1995 Constitution of the Republic of Armenia declared the principle of belonging of a single power to the people and established only three forms of direct democracy, with limited normative content, which created a threat of their political and legal neutralization by current legislative regulation. Constitutional regulation dividing the single mechanism of democracy into two subsystems did not guarantee their systemic balance, which in turn created the preconditions for establishing the supremacy of public authority control and appropriation of people's power.

Բանալի բառեր – *սահմանադրություն, ժողովրդաիշխանություն, ժողովրդաիշխանության ձև, ընթացիկ օրենսդրություն, գերիշխանություն, հավասարակշռություն, իշխանության յուրացում*
Ключевые слова: *конституция, народовластие, формы народовластия, текущее законодательство, верховенство, равновесие, присвоение власти*
Key words: *constitution, democracy, forms of democracy, current legislation, supremacy, balance, appropriation of power*